

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/1

25 ապրիլի 2017թ.

Քննարկվեց Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզեոլուի ներկայացուցչի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 10.10.2016թ. թիվ 2136028 ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկման դեմ:

Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզեոլուի ներկայացուցչի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչության աշխատակիցների կողմից ստուգում է կատարվել Երևան քաղաքի Երվանդ Քոչարի 17/2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Մելքոն Ալեքսան Էմիրզեոլուի մոտ և 10.10.2016թ. կազմվել է ստուգման թիվ 2136028 ակտը, որով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 5 կետի հիմքով առաջադրվել է 60.000 դրամի չափով եկամտային հարկի պարտավորություն և ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշման թիվ 2 հավելվածով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 17-րդ և 23-րդ կետերի խախտման հիմքով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ 150.000 դրամի չափով:

Նշված ակտի դեմ բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ գանգատարկման հանձնաժողով, որի 25.11.2016թ. թիվ 36/2 որոշմամբ բավարարվել է մասնակի՝ այն անվավեր է ճանաչվել ակտի միայն 1-ին կետի մասով, իսկ 2-րդ կետը՝ ՀԴՄ կիրառման կանոնների խախտման հետևանքով տուգանքի կիրառման մասով, թողնվել է անփոփոխ:

Գանգատարկման հանձնաժողովի 25.11.2016թ. որոշման դեմ Ա/Ձ-ի կողմից բողոք է բերվել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովին, որը 17.02.2017թ. որոշմամբ մերժվել է, սակայն այդ ժամանակահատվածում տուգանքի գումարը կրկնապատկվել է:

Հաշվի առնելով, որ 10.10.2016թ. կազմված ստուգման թիվ 2136028 ակտը գտնվել է գանգատարկման փուլում և գանգատաբերի կողմից հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ տուգանքը կարող է կրկնապատկվել, գանգատաբերը խնդրում է կրկնապատկված գումարը՝ 150.000 դրամը, զիջել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 05.09.2016թ-ի թիվ 2136028 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզեոլուի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր

պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 10.10.2016թ. թիվ 2136028 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 210.000 դրամ: Մասնավորապես, Ակտի 1-ին կետով կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ 60.000 դրամի չափով, իսկ 2-րդ կետով՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Գանգատաբերի կողմից Ակտը նախ վիճարկվել է վարչական կարգով: Մասնավորապես, Հանձնաժողովի 25 նոյեմբերի 2016թ. նիստում քննության է առնվել Ակտի դեմ բերված գանգատը: Արդյունքում ընդունվել է թիվ 36/2 որոշումը, որի համաձայն անվավեր է ճանաչվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 10.10.2016թ. թիվ 2136028 ակտի 1-ին կետը, իսկ 2-րդ կետը՝ թողնվել է անփոփոխ:

Այնուհետև, համաձայն չլինելով Հանձնաժողովի 25 նոյեմբերի 2016թ. թիվ 36/2 որոշման հետ գանգատաբերն այն բողոքարկել է ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով, սակայն բողոքը մերժվել է:

Մինչույն ժամանակ, Ակտի 2-րդ կետով՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով այն կրկնապատկվել է:

Հանձնաժողովը գտնում է, որ գանգատաբերի միջնորդությունը՝ Ակտով առաջադրված տուգանքի կրկնապատկված մասը նվազեցնելու վերաբերյալ հիմնավոր չէ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված տուգանքը, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմոծելու դեպքում, կրկնապատկվում է:

Տվյալ դեպքում խախտման փաստն արձանագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 10.10.2016թ. թիվ 2136028 ակտով, որով առաջադրված տուգանքը երկամսյա ժամկետում չմոծելու հետևանքով, այն սահմանված կարգով կրկնապատկվել է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ա/Ձ Մելքոն Ալեքսան Էմիրզեոլլուի ներկայացուցչի գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ